

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարին	հավար	12 Ժր.
Տարեկան		6 »
Վեցամսեայ		6 »
Արսասահմանի		
հավար տարեկան	15 »	
Վեցամսեայ	8 »	
Ամերիկայի	հավար	
Տարեկան	3 ռբ.	
Վեցամսեայ	1.50 »	

Մանուգան սողը առաջին երեսին հավար 40 սխիկ վերին երեսին հավար 20 սխիկով է. երեսին անկողնակերտը հավար 20 0/0 զեղչ կրչայի:

Վաճառքի հավար ձևով 10 սխիկով

ՉԱՐԺՈՒՄ

ՎՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂՎՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐՏՈՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նախակ և ցրակ գրկեղ
Խմբագրութեան հաս-
ցիկն .

Редакция на вѣстникъ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjoun“
Varna (Bulgarie)

Արսասահմանի հավար
ձեռք
(20 ՍԱՆԹԻՄ)
Պուշկարինի հավար
ձեռք
(15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք և ս չնն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՄԸ, ԲԱԺՆԵԿՆԸ, ՊԵՏՐՎԱՐ ԵՒ ԿՈՆՍՏԱՆՍՊՈԼԻՍ ԿՆՍՏԱՆԻՍ

ԵՐԱԶ ԷՐ

Կը քաղի քարոս չորսն կործակ
ես անօրի, ծարաւ, յոգնած, քր-
նաբոր
Չորս զին ժայռ, ձոր, փայտար,
անդունդ խորախոր
Կարծես անյոյս Աստուծոյն սեւ
լոնն էր .

Ձիւր կանայ տէրէւ մը գէթ, ունկ
մը ցուր
Դեղեկի անկէ մանրեկն յուսանաս
ես շնչասպառ ժայռեկն ի վեր ա-
նընդհան
Կը քաղի կորստանակ, խոր, քր-
նաբոր .

Ու ծարաւ զիս Տառապանիսի աչք
ուղիկն
Վիհի մը մօտ ժայռին եզրը, որուն
կից
Կը քարծամար հեկ, յաւ մը պս-
ղաչից
Ես տեղացիս աչք ծառի քուրս պը-
տուղիկն .

Սակայն ճեսայ, ոսկիս անբեւ
բխար
Սուր դաշտններ, զեկիտ անտաւ
հոն ու հոս
Տեսայ փրփրոս, արեւն-գիտ մը
յորդանու
Որ կ'ոտոգիտ ծառին կոճիկը դարե-
ւոր .

Հուզու մեւ մը քիտ ու դժու
նայաւորով
Ոսրը դրամ մանոս ժայռի եզր-
իկն
Պողպատ սուր մը շողշողալով իր
ձեռքին
Ինձ կը նայի շիտակ կանգնած
ծառին տով .

Եկանգ առ, ըսաւ, մի՛ մօտ-
նար աչ աղիկն
Կոխն եւ ես, Ազատութեան ծառն
էս
Օ՛ն զեկի վերցուր քի պըտուղիկն կը
քաղաս
Ձեռն արիւնդ կարիչ մը տուր աչք
զեկին .

Ճընցը եցան ձայնեկն ժայռի
սեւ դեղեր
Ես ես դողողը ընկրկեցաւ, քայլ մը
էս
Սակայն ինկայ աղջաւորողի վիհն
անկն
Ես արեւնայ խորով անհոս . . .
Երա՛զ էր .

Վ Ե Տ Ա

ԲԱՑ ՆԱՄԱԿ

«ՉԵՂՈՒՄ» ՄԻԹՈՒՐԻՆ

Յարգելի պարոն, կարգացի
«Հայրենիք»-ի մէջ հրատարակ-
ված ձեր վերջին գրութիւնը, որը
կազմում է շարունակութիւնը ձեր
անյաջող բանակցութեան, միու-
թեան մասին, և որի մէջ գուր
որոշում էք Արզունանի ու Չո-
բանեանի տիպերը և նրանց կա-
տարած դերը այս երկու երեք
տարան ընթացքում .

Այդ որոշումը շատ անպատ-
է վերոյիշեալ երկու պարոնների
համար և բոլորովին արգարաց-
նում է Դաշնակցութեան բանած
գիրքը հանգէպ այդ տեսակ ցե-
ցերի . Սակայն մի նկատույն
թիւն եմ ուզում անել ձեզ, որը
արդէն ձեր առաջին գրութեան
ժամանակ տրամադիր էի, սա-
կայն ինչ ինչ պատճառներից
գրգռւած չուզեցի .

Այսօր երբ կրկին հրատարակ
էք զայլս, անհրաժեշտ եմ հա-
մարում այդ նկատույնի ձեր
ճիշտ հայ անհատի այն իրաւուն-
քով, ինչ իրաւունքով որ դուք
ուզեցել էք միջամտել գերբ
ստանձնել միութեան գործը յա-
ջողացնելու համար .

Իմ կարծիքով դուք աւելի լաւ
կանէիք ձեր իսկական անունով
մէջտեղ գայլիք այդ մերկացում-
ների անելու .

Դուք այդ գրութիւնները հրա-
պարակ էք հանում հայ ժողո-
վրդի համար, բայց ժողովրդի
համար այդ բովանդակութեամբ
անստորագիր գրութիւնները ոչ
մի ազդեցութիւն չունեն գրթէ.
Նրան կարող չեն համոզել որ դուք
չեղք էք, այլ դաշնակցա-
կան, և դրա համար էլ դաշնակ-
ցութիւնն էք արգարացնում . Ե-
թէ չեմ սխալվում հակառակ
թերթերի մէջ այդ տեսակ մի
ակնարկութիւն էլ եղաւ .

Ձեր բոլոր ճիշտը ցոյց են
տալիս որ դուք լուրջ, անկեղծ
և հայրենասէր մարդ էք . այդ

յատկութեամբ օժտված լինելուց
յետոյ այլ ևս ոչ մի բան չի կա-
րող ձեզ արգելք լինել իսկական
անունով մէջտեղ գալու խըն-
դիրները պարզելու . Մի քա-
նի դաշնակցականներ, որոնք
միշտ ժողովրդի հետ շփուած ենք,
գիտենք ձեր ուղիները, ձեր գրու-
թիւնները և կայութիւնները բե-
րած միջոցին, երբ մեզ նկատում
են թէ—Միտիւրը ձեր մարդն է,
միտմենք կանգնած, որովհետեւ
բարոյական իրաւունքը չունենք
ձեր ուղիները պարզելու, քանի
որ ինքներդ թագնւում էք .

Ինձ թվում է որ դուք ձեր իս-
կական անունով մէջտեղ գալուց
յետոյ է որ իսկապէս մեծ ծառա-
յութիւն պէտք է արած լինէք .
որովհետեւ այն ժամանակ է որ
ժողովուրդը, պէտք է հասնանայ
թէ ո՞վ է իրեն հետ խօսողը, և
որչափ կարեւորութիւն արժէ տալ
այդ խօսողի ասածներին .

Ես համոզված եմ որ ձեր իս-
կական անունով հրատարակ գա-
լը շատ և շատ օգտակար պէտք է
լինի, որովհետեւ ժողովուրդը կը
տեսնի որ դուք աւելի մօտիկ էք
եզել հնչակ աններին, քան թէ
դաշնակցականներին . կը տեսնի
որ դուք այդ մարդկանց հե-
նոյն իսկ անձնական բարեկամու-
թիւն էք ունեցել, և այդ բա-
րեկամութիւնը խզել էք ու քն-
նադատի դերը ստանձնել միայն
և միայն հայրենիքի ու մեր դժ-
բախտ ժողովրդի կենսական շա-
հերը աչքի առնել ունենալով .

Ու քանի որ Հայրենիքի շա-
հերը ձեր աչքում այդքան մեծ
կարեւորութիւն ունեն, իմ կար-
ծիքով ձեր նոր քայլը պէտք է
լինի իսկական անունով մէջտեղ
գալ թէ գործին աւելի մեծ ծա-
ռայութիւն անելու և թէ դաշ-
նակցութիւնը որոշ գիրքի մէջ
դնելու համար այդ խնդիրների
վերաբերմամբ .

ՎԱՐԴՈ

ՏՕՊՐԻՉԻ ԱՂԲԱՏԱՆՆԱՄԻՆ ՇՈՒՐԸ

Օրերս Տօպրիչ այցելելու պա-
տեհութիւնն ունենալով, ուրա-
խութեամբ սրտի լսեցի տեղոյն
նորագ կազմուած աղքատախնամ
ընկերութեան մը գոյութիւնը .

Թէեւ նոյն նպատակի մէջ Տօպ-
րիչի վերերեւումը ինքնին գովե-
լի է և շնորհաւորութեան արժա-
նի, սակայն թող ներեն յարգե-
լի Տօպրիչի ազգակիցներս,
երբ ես ալ իմ անհատական հա-
մոզումներս իրենց ներկայացնե-
լու թողտուութիւնը խնդրեմ .

Նպատակ չունիմ անցեալը պը-
պտել և կամ քննել թէ Տօպրիչի
պէս քաղաքի մը համար որչափ
կարեւոր է նոյնպիսի մարմնոյ մը
գոյութիւնը . միայն սա չափ ը-
սեմ որ, տարւոյն մէջ հազիւ 5-
10 անգամ իրապէս օգնութեան
կարօտ թշուառներու երես կը
տեսնէ Տօպրիչը որոնց 2-3 ֆր.
օգնութեան հասնելը շատ դժ-
ուար պիտի չըլլայ եթէ բարի
կամեցողութեան ոգին չպակտի .

Ժողովուրդի մը համար միա-
թարական երեւոյթներ են, այս
կարգի բարեկարգական ձեռնար-
կութիւններ, սակայն ըստ իս
մեր արդի վիճակին մէջ, ընդ-
հակառակը տխրութիւն կառթէ
իւրաքանչիւր խորհիլ գիտցող-
ներու . Վասնզի երբ մենք ամե-
նէն կարեւորը, «լինելը լինե-
լու» հարցը մէկդի թողած, երկ-
րորդական երրորդական խնդիր-
ներու ուժ կուտանք, այն տեսն
վիճակի անգիտակցութիւնն իս ա-
պացուցած կը լինինք . Երբ հայ-
րենիքի ծոցին մէջ մեր ազգի
ամենէն աղնիւ մասը, մեր ա-
պագայ յուսոյ նշոյլը, «Հայաս-
տանի մէջ Հայրը անդէն ու ան-
սուաղ, թշնամիին գազան կիր-
քերուն ենթակայ, տակաւ առ
տակաւ սպառելու դատապարտ-
ուած է, մենք փոխանակ մեր
բուն պարտականութեան փու-
թալու, ելեր այս ազատ միջա-
վայրերուն մէջ, այնպիսի կազ-

մակերպութիւններ կընենք, որպէս թէ մեր բուն հայրենիք ազատուած անկախ ալ եւս բնաւ օգնութեան պէտք չունեցած լինէր. Երբ սոհմային հայրենիքի մէջ վերջանայ հայութիւնը, աւտասահմանի մէջ հայու պոյու-թիւնը այլեւս ի՞նչի պէտք կուգայ. նախ աշխատինք ազատել բուն հայութեան օրրանը, մեր ուժերը որչափ ալ արհամարհելի քանակ մը կազմեն չը ջլատենք բուն գործէն, Հոն հայու բնակութիւնը ապահովենք ու ապա երրորդական խնդիրներու դառնանք. Գուցէ ըսուի ի՞նչ կարծէ Տօպրիչի մը մի քանի սկիւններ՝ այդ մեծ ու հսկայ պահանջներու հանդէպ, սակայն չէ՞ մի քանի կաթիլները ծով կը կազմեն. Ըստ իմ կարծեաց սակի լու է փոխանակ ազգատախնամներու թիւը բազմապատկելու (որն որ ոչ ալ ինչ է, ըստ իս՝ եթէ ոչ դանդաղ ծոյլերու, շատ քիչ բացառութիւնով, ստուարացումը դիւրացնող միջոց մը. քան իւր բարձր կոչումին ծառայող), ոյժ տանք յեղափոխական կազմակերպութիւններու. վասն զի այդ մարմինները միայն են, որ հիմնաւի անձնուրացութիւններով կարող են Սասուն ու Աէյթիւն, կուտող առիւծներու ձեռքը զէնք հասցնել, վայրագ թշնամոյն արտադրած բիրատոր հայ որբիկներուն պատու մը հաց ու բանտարկեալ անձնազոհներուն քիչ-չատ մխիթարութիւն ջամբել (օրինակ, Ամերիկայի Անձնապաշտպանութեան, Ֆիլիպպիի Հայ Կարմիր խաչի ընկերութիւնները, Անձնան «Իօլգարացի» թարգմանութիւններու սոպագրութեան արդիւնքի գործածութիւնը). Ինչպէս բացայայտ կերեւի իրենց կեանքի գնով կուրծք տուած, ապագայ ազատ ու անկախ հայրենիքը բուտեղծելու բարձր կոչումը ունին:

Մինք, արտասահմանի հայերս հօկայ պարտականութիւններ ունինք հանդէպ յեղափոխական կազմակերպութեանց որովհետեւ բուն հայրենիքի մէջ եղող հայութիւնը, միմիայն իր գոյութիւնը՝ անօթութեան և գազանութիւններու դէմ թէ պահէ անով ալ անփոխարինելի ծառայութիւն մը մատուցած պիտի լինի, հետեւաբար ազգային յեղափոխական ուժերը յոյսը մեր պարտաճանաչութեան միայն յենած պիտի կարենան գործել. երբ մենք թերանանք մեր բուն պարտականութիւնը կատարել, ուրիշ կերպ ծառայութիւնը չէ որ պիտի կարենայ մեզմացնել մեր անաարբերութեան սեւ դատապարտութիւնը: Վասնզի ի՞նչ կարծէ արտասահմանի մէջ քանի մը թշուառներու օգնել, և

գուցէ անոնք առանց մեր օգնութեան ալ պարելու կարող լինէին) քանի որ բուն հայրենիքը ծայրէ ի ծայր թշուառութեան ու կեանքի մըն է, և որուն պէտքերը աւելի կենսական ու բազմատեսակ են: Զօրացնենք յեղափոխութիւնը, ոյժ տանք կուտող շարքերուն, որպէսզի նա ալ քիչ ժամանակէն կարող լինի իր նւագատակի իրականին հասնիլ ու երբ մեր պաշտելի հայրենեաց խաւար հօրիզոնին վրայ՝ աւետարներ արշալոյսը երեւնայ, այն ատեն միայն խորհիւք երկրորդական երրորդական պարտականութիւններու վրայ:

ԱՆՄԱՆՕԹ
Փետր. 10 1903
Տօպրիչ

ՃԱՐԱԹԱՆՆԵՐ

Վ.

Վերակազմեալ Հնչակեաններու վեց տարեան տխուր, խիստ տխուր անցեալը պարզելով՝ առջի յօդուածներովս որչափ կը ներշնչուի «Շարժում» ներկայի հասցիատակ մանրէներուն ներկան եւս ճանչցնել, բնաւ չզիջանելով ինչեալ սաօլապէ՛տ շարժումներուն գոյութեան և համար ստիպուած Հ. Յ. Դաշնակցութեան հետ միանալու պատրաստին տակ հրապարակ հանած միութեան խնդրոյ մասին երկու օրէն ծանոթացու:

Հնչակեան երկու հատուածներու միութիւնը եւ շուտով գալձեալ բաժանումը կարգարարէ Դաշնակցութեան զգուշաւոր, խելացի վերաբերումը դէպի վերակազմեալները:

Այսօր անխառն վատ է որ վերակազմեալները եղան դարձեալ պատճառ բաժանման, միացեալ հնչակեանութեան նորակազմ կեդրոնի երբք անդամներ պատեցին վարագոյրը որուն ետին մըքս կը աներթ յայտնի «էնտուպու» արարածներ:

Արժիարի հեռանալէն յետոյ «խելացի Դաշնակցութեան» հնչակեանները ալ կը կարծէին որ ժողովուրդի զէպի Դաշնակցութիւնը տածած հաւատք պիտի կրնան խախտել, վստահ ըլլալով որ, Դաշնակցութիւնը երբէք չպիտի զիջանէր միանալու, համբուրուելու, իրենց հետ. նախ, որովհետեւ իրենք յեղափոխական մարմին մը չեն ներկայացներ 96 թուականէն մինչեւ այսօր եւ յետոյ, բոլոր հնչակեան ղեկավարները գիտակցաբար կամ անգիտակցաբար մէյմէկ հակա-յեղափոխական Արժիարներ դարձած են, իսկ այս պարագային մէջ ալ եւս դիւրին էր միամիտ ամբողջ լարել Դաշնակցութեան դէմ. համոզիչ չեղաւ, — Ի՞նչ կուզեն ալ եղբայր սաղբօշակները. ինչէ հիմակ ալ Արժիար չկայ եւ, ինչու չեն միանար. չեն ուզեր միանալ էֆէնալի չեն ուզեր:

Եւ սակայն տարաբախտաբար հնչակեան շուտափոխ թաժանումը պող ջուր լեցուց բոլոր լատասեաններուն վրայ եւ չձգեց որ երկար տան կա-

րենան ձուկ որսալ պրտոր ջուրի մէջ, եւ ի՞նչ անիրաւ, լիտի յարձակումներ չգործեցին դաշնակցութեան դէմ հնչակեանները, Ամերիկայի մէջ մասնաւորապէս, թերթերով, թէ լատասեաններով:

Ու երբ, «Հայրենիք» կը պոռար թէ հնչակեան ղեկավարները անկեղծ չեն, վստահիլի անձնաւորութիւններ չեն. «Ձայն» Հայրենեաց, հնչակեան կուսակցութեան Ամերիկայի նահանգային վարչութեան հրատարակութիւնը, կը ապէր յօդուած մը, որուն հետեւեալ մասը ընթերցողին ուշադրութեան կը յանձնենք. թիւ 1 Օրն մէջ կը գտնանք, «հակափոխութեան շարժումը սկսաւ «Հայրենիք»ի մէջ ու ամէն օր նոր առարկութիւններ ու դժուարութիւններ սկսաւ յարուցանել: Ու հիմա ալ անվստահութեան խնդիր մըն է որ հրապարակ նետուած է: Հնչակեան բոլոր վարիչները խաբարս են ու անվստահի են ըստ Ա վի. Իրաւ որ հայ անուան նախատի» մը պիտի ըլլար եթէ կարելի ըլլար հաւատալ թէ, աքառ մեծ կազմակերպութիւն մը խալդախ եւ ազգադաւ վարիչներ ընարած է իր գործերը վարելու: Այդ կը նշանակէր թէ կամ հնչակեան ամբողջ բանակին մէջ չէր կարելի գտնել ճշմարիտ մարդիկ, եւ կամ ամբողջ բանակը արգէն կեղծարարներու խումբ մը ըլլալու էր իրենց նման վատեր ընտրելու:

Այս նախատիք մը պիտի ըլլար նոյն իսկ ամբողջ հայութեան, որուն ծոյցին մէջ այսքան արտասեւած բազմութիւն մը գոյութիւն ունի:

Եւ որովհետեւ այլեւս հնչակեան միութեան կատակերգութիւնը վերջացած է. խաբարս, կեղծարար, շուտուցի նոր հնչակեաններու շնորհիւ, արդ, վերագրեալ սողերը խաբարողը հիմակ պէտք է ընդունի որ իրաւոյնէ հնչակեան շարքերու մէջ, ո՛չ մէկ հատ ակեղծ վարիչ գոյութիւն ունի. անաարակոյս, անօթ գոնէ պ. յօդուածաբար շատ լաւ սիրտած են այն մարդիկը, որոնք զժբախտ աւթի ունեցած են հնչակեան վարիչներ ըլլալու:

96ի հնչակեան պառակտումի ժամանակ ինչ արցքեր որ տեղի ունեցան, նոյնը այսօր երկրորդ բաժանման անեւ տեղի ունեցած է. այս մասին պիտի թողով ուրիշ յօդուածի դատուանք այժմ վերակազմեալներու ներկայ զգալի քողին, որը քիչ մը փոխուած է, վեց տարուան փոճառութեանն օգտուած. «... առաջ պաշտօնական թերթն էր որ յեղափոխութեան, եւ մասնաւորապէս Դաշնակցութեան վրայ կը յարձակէր կատարած. փոփոքը բերանը, հիմակ, կեղծ «Հնչակ»ը յեղափոխական ոգի կը պարունակէ, իսկ վայրահաջութեան, հակադեմոկրատիկ գաղափարներ ժողովուրդին մէջ արմատացնելու, յեղափոխական գովիլի ձեռնարկները, եւ վերջապէս կարեւոր դաշնակցականներ խաճնելու դեր տրուած է «Ձայն» Հայրենեաց ի. եւ որովհետեւ վերջինս ալ Ամերիկայի հնչակեան մասնաճեղքերու նահանգային վարչութեան թերան է. մանաւանդ հոն գորդները եղած են կեդրոնական վարչութեան անդամ, եւ հեղինակաւոր հնչակեաններ, կարծէ ուրիշն ճանչցնել զանոնք հասարակութեան, կարծէ վար աննել իրենց կեղծ գիտակները, ցուցնելու համար իրենց իսկական գոյնը. կար-

ծէ սա վերակազմեալ տիրապի լիիրենքու կեդրոնական վարչութեան, եւ նահանգային վարչութեան հրատարակութեանց զիրար հակասող գրութիւնները ի տես զնեղու հայ հասարակութեան առջեւ, որոնք միայն ամբողջին միտքը կը պրտորեն, հաստատոր հայ հարուստը կը շոյեն որ, յեղափոխութեան հետեւ որսալ ճշմարիտ յօդուածով պիտի հաստատենք ասիկա, «Ձայն» Հայրենեացի թիւ 160ին խմբագրականովը:

Սուրհեհ
Ֆիլիպպի

ԳՕՆՍՐԱՆՑԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԷՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԹԱՂԱՎԱ, ԽՈՒՂՈՒԳՆԵՐՈՒՆ ՅԵՅԲ

Ու վերջապէս, քաղաքիս Յակոբ քահանայ Դատարան, այնչափ զօրաւոր նկատեց ինքզինք, որ ալ իր դիմուկը վար առած թաղ, խորհուրդը ջանջախոյ ուզեց, սակայն, միանգամ ընդ միշտ, ջախջախեցաւ ու վար ինկաւ:

Բո՛ւ սուտքի Պարտեզակցի այս նախկին տիրացուն, Սիլիսդրէյի հայ եկեղեցին վատօրէն լքուելէ յետոյ, որուն վրայ ձեռնարուած է իբր քահանայ, սակէ եօթը տարիներ առաջ, կապաստանի Դձնաթմանցա՝ հակառակ պարտիարքական հրամաններուն, ու որովհետեւ իր քսակը պարտացնելու ընդարձակ ասպարէզ մը ընդնմարած էր հոս:

Իր սիրտն ու հոգին, որոնց մէջ երբէք ասպնջականութիւն չեն գտած վեհանձնութիւն, աղնուութիւն եւ մարդասիրութիւն, մարմնացումը ու բոյլը եղած է ընկերական ակտիւութեան սմեռնէ վատագոյններուն. արծաթակաշտութիւնը խաբարսն է իր հաւատքին ու էութեանը, ու ստորունութիւնը, քսութիւնը, ստախոսութիւնը, հայհոյութիւնը, զրպարտութիւնը իր ոգւոյն ու բնաւորութեան կազմութեան միակ տարրերը են:

Եւ սակայն, այս անարժան կրօնակար, իր կմախք մարմնոյն, աղտոտ թուխ գէմքին ու խալիկ իր գառկին մէջ ունեց ծէ Թուֆէեան հաժաոճուած խորամուկութիւն մը, որուն միջոցաւ, եօթը տարիներէ ի վեր գիտցած է քաղաքիս ազգային մրմնութիւնը ամբողջ հայ բնակչութիւնը յուզել շարժել, պառակտել ու խնդրիւրբը ի շահ իրեն լուծել տալ:

Գաղթականութեան հոսանքի ժամանակ, ընծայուած տխուր առիթներէն օգտուելով, պանդուխտներու թշուառութիւնը շահագործող, հայ գաղթական կիներու կրօնական գաջուսիլ երբ ու պարտաճանաչութիւնները շահագործելով՝ անոնց քունի մը տասնեակ արժէքաւոր մատանիները կողպտող, ու Պրիւսէլի Հայասիրական ժողովին առթիւ՝ հասած յիշատակագրին նկատմամբ իր ազգին դաւաճանող սոյն ապիրատ կրօնականին եօթը տարուան սխրագործութիւնները չէ որ կուզենք մենք հոս մի առ մի պատկերացնել. ասոնց շարքը շատ երկար պիտի ըլլար: Արդէն, «Շարժում» ընթերցողները կայգացած ըլլալու են, անցեալ տարի կարգ մը երկար յօդուածներ Յակոբ քահանայ Դատարանի տը-

խուր գործերու մասին, զորս առանց չի կրնալու, առանց բերանը բանսլ կարենալու մարտեց ու մարտեց այդ սեւ հողին:

Իւր պաշտօնավարութեան միջոցին, բոս իր խոստովանութեան, արդէն յաջողած է ութը ասար թաղի խորհուրդներ պառակտել ու տապալել սոյն ըջանին մէջ փոխուած ու ճամբուած հայ ուսուցիչները սնահամատակարար ստուար թիւ մը կը կազմեն, ու ժողովրդեան մէջ տիրող գրգռութիւնը ու յուզումը միշտ անպակաս ու յարաճուն եղած է:

Եւ սակայն, շուրջ տարիէ մը ի վեր բնորոշած արդի պատ. թաղ. խորհուրդ պողպատեայ ձեռքերը շատ ծանր եկան Դատաւորեան քահանայի ուսերուն վրայ. Ուսուցչական մարմնին եղբայրաբար միացումը ու արդիւնաւոր աշխատութիւնը իր ճակատին դարձուցին իր ուղղած թունաւոր սլաքները, ու ժողովրդեան ներքաշնակաւ որովք վտարեց իր մէջէն այդ պատակասի ընկալալից, բացի մի քանի ողորմելիներէ, որոնք արժիւթ Դատաւորեան քահանայի քուռ խնկարկով իւրենցին, յախտեան զուրկ պիտի ըլլան՝ անոր իրական զէմբը տեսնելէ:

Դատաւորեան քահանայ իբր տիպար ընշաքաղց է իր շահերու յնձուղութիւնը, ստորաքաղց ոգւով վեր, միշտ ազգային անկեղծարար ու գրգռան վիճակին մէջ որեւած է. ուստի, այն օրէն սկսեալ, երբ Բօնսթանցայի ուսումնասէր հայ հասարակութիւնը, ամեն զոհողութիւնն ընելով, Հայկազեան հոյակապ վարժարանը կառուց ու անոր վրայ կանոնաւոր թաղ. խորհուրդ մը իշխան դրաւ, այդ պաշտօնական չմարմինը իր աչքին փուշ երեցաւ: Այդ մարմինը, որուն ամբողջ մտածումը և ուղղութիւնը եղաւ Ազգ. գաստարակութեան աւագ հարցը, չէր կրնար անտես անել գաստարեան քահանային այն ապերաստն ընթացքը, որուն նստեւած էր նա մինչ ցայն վայր Ուստի, չափ մը դնել ուղից անոր շահադիտութեանց վրայ: Ազգային վարժարանի ելմասցոյցին կանոնաւորման համար, կարգ մը կանոններ

գրաւ ազգայնոց վճարելիք տուրքերու նկատմամբ: Այս որոշ կանոնները արդեւ կը լրջաին Դատաւորեանի անձնական շահերուն. ուստի, առանց նկատի առնելու սերունդի մը դաստիարակութեան խնդիրը, ամեն տեսակ ստորնութիւններով այդ մարմնին մէջ պտտակտուր սերմեր ցանց, անդամները իրարու դէմ լարեց ու յաջողեցաւ զայն տապալել:

Յաջորդ խորհուրդ ընտրութեան մը համար կազմուած ընդհանուր ժողովին մէջ, Դատաւորեան քահանայ, իբր միահեծան պետ ժողովին, ամբաստանեց հրաժարեալ մարմինը, իբր իր անձնակաւ հանգստութիւնը խոտով ու շահերը խանգարող մարմին մը, — ներկաները չեն մտցած անշուշտ այս անպատկառ յայտարարութիւնը — և պահանջեց որ, ընդհ. ժողովը ընտրէ այն տեսակ մարմին մը, որ իր հանգիստը ու անձնական շահերը պաշտպանող լրջայ:

Ու չի գտնուեցաւ, զժբախտաբար, ազգային մը որ պապանծեցնէր այդ ամբարտաւանը, իբր հետող պաշտօնեայ Սահմանադրական օրինաց:

(Շարունակելի)

ՃԱԼՄԱՆ-ԻՇԽԱՆ

25 Յունուար 1903

Քննարկանց

ՌՈՒԾՃՈՒՓԻ ՊԱՐԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

Փետրվարի ու թին շաբաթ գիշերը տեղի ունեցաւ Ազգ. վարժարաններու հոգաբարձուներուն ի նպաստ վարժարաններու սարգստ պարահանագէտը. հոգաբարձութիւնը ամեն ջանք գործ գրած էր պարահանագէտին պէտք եղած վայրը տալու համար. Ազգ. արական վարժարանի դրսի կողմը ամբողջովին զարդարուած էր գոյնզգոյն լապտերներով ուրով վարժարանը գրեթէ լրջարու մէջ սղողուած էր. վարժարանին սրահի պատերը զա-

նաղան գորգերով պնծնազարդուած էր. պարերը սկսան ժամը 10ին և բոլորն ալ կանոնաւոր ընթացքով ընթացան. առաջնորդող պ. Աւրամ Ասկէրեան իր ստանձնած պաշտօնին գիտակցութիւնը լաւ ըմբռնած ամենայն կանոնաւորութեամբ քարաւ պարերը. պարերու միջոցին հոգաբարձութիւնը ձեռնարկեց վիճակահանութիւն քաշուելուն, ու գրեթէ մէկ, մէկուկէս ժամուան մէջ աւարտեցաւ վիճակահանութիւնը 400 սումակով. թէ և բազմութիւնը շատ չէր բայց ուրախալի է ըսել թէ ամբողջովին ազգային շրջանակի մէջ կատարուեցաւ պարահանագէտը. Ռուչուքի բարձր դասակարգը անխտիր կերպով ներկայ գտնուելու պատիւը ըրած էր, բայց ժողովրդի ամեն խաւերէն ներկաներ չէին տեսնուեր հակառակ պարահանագէտին գիւրամտաչելի մուտքին, որով պարահանագէտը ժողովրդական գոյն չունէր. ժամը հինգն էր երբ պարահանագէտը վերջացաւ և ժողովուրդը կոհ սրտով մեկնեցաւ:

Յոյս ունինք թէ հոգաբարձութիւնը կարեւոր նպաստ կատարած կը լրջայ Ազգ. վարժարաններուն համար:

Ռուչուք Ե փետ.

ՓՈՒՓՐ ԹՂԹՍԱՐ

Փիլիպէն կը գրեն Փետրուար 6, հինգշաբթի գիշեր, Պապանեան իմաստախումբը տեղս ներկայացուց Հ Ա Մ Լ Է Թ ը մեծ բազմութեան ներկայութեանը. Հայ արուեստագէտներուն կարողութիւնը գնահատելու գիտումով յերկայ էին նաև պուլ-

կար ազգային թատերախումբին անդամները որոնք — ինչպէս իմացանք — չեն ուզեր հաւտալ եղեր թէ հայ դերասաններ կրնան ճէյքաբեր ներկայացնել: Խաղը զուհացուցիչ անցաւ. երրորդ վարագոյրին իջնելուն, ծափահարութիւններով պ. Պապանեանը խաես կանչեցին. պ. Պապանեան ներկայացաւ և ընդունեց ծաղկելուն մը գոյնզգոյն ժապաւէններով զարդարուած, ինչպէս նաև տուփի մը մէջ՝ սիկարի արծաթեայ տուփ մը՝ սիրուն սաթէ սիկարիկով մը: Վերջէն, պուլկար դերասանները ջերմ գոհունակութիւն յայտնեցին հայ դերասաններուն:

Գ.

ԱԿՆԱՐԿ ԾՐ ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅ

ԽԱՆՈՒԹՊԱՆՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

Նատոնց ի վեր մտափրկ էի սիրելի յիւանութեան ազգակահայոց ու շաղթութիւնը դարձնել խնդրոյ մը վրայ, որ մեզ ազգային արժանապատուութեան գնահատութեան քանակը որոշուել սահմանուած է:

Խօսքս Պոլսոյ Ազգ. Հիւանդանոցի սիկարի թղթին համար է: Սիրելի ընթերցող, եթէ պատեհութիւն ունենայիր ինձ հետ քիչ մը շրջապալութեան ելնել, ամբողջ ծօգրուածան, Տէլի-Սոման և Կամալ-Պոյը (պանջ կընեմ Ռոմանիան), իւրաքանչիւր յայտնութիւն պիտի հանդիպէիր դու Հայ խանութեաններու, որոնք տարեկան պատկառելի քանակութեամբ սիկարի թուղթ կ'ապառեն: Սակայն մէկուն իսկ մտքէն չանցնիր այդ տարաբաղը Հայորդիկներու Արիւն — Արցունքի

ՀՐԴԵՂ

Պայրի, կայրի, հրդեհ կայ. այս ձայնն է որ կը լսուի խաւարին մէջէն:

Ձանկաները կը զարնեն, մարդիկ խուռնեւում, սարսափահար դուրս կը թափին փողոցին մէջ շուարած: Հեռուէն կը տեսնուի սեւ-գորշ ծուրը արիւնաներկ եւ ամէնքը կը վազեն հոն՝ ուր կրակը առած է:

Խարխուլ չէնք մը:

Երկաթայրի բոցերը գիրծր հրմշտկելով, ճարձատելով կը բարձրանան երկինքին մէջ. ու պար բռնած խաւար շէնքին շրոյ դին. կը ծիծաղին կը համբուրեն, կը լլպեն կը բոցավառեն մրմուսացող շէնքը: Եւ այս անսպասելի յայձակութիւն առջեւ, բոնակալ-էնքը կը ճչէ. կը սողառնայ ու իր վրայ կը գալարի յուսահատ ճիգեր թափելով:

Իրոցերն ուրախ են շատ ուրախ, կը պարեն, կերպեն, կոտորուան, արհամարհոս քրքի մը կարծակեն՝ թեւտուած հովին որ աննիւթ ողբ

կը թափէ իրենց սրտին մէջ:

Սակայն բոցերը յանկարծ կը սարսափին, կը գողգողեն. կը տեսնեն մարդիկ որ իրենց վրայ կը յարձակին կատաղած եւ կուզեն մարել այնքան զօրով յառաջ եկած իրենց փառաւոր ձեռնարկը: Ջուրի տեղատարափի մը տակ անոնք կուզեն խնդալ իրենց ուրախութիւնը. ու անվեհեր կը նետուին յառաջ ժայթքելով անէծք իրենց սրտէն: Տեւս, օրհասական բոցեր, միանամուռ ու ժերնին ժողոված՝ ինչպէս կը յարձակին աւելի եւս ուժգին, իրենց սրտէն միացող արեան ճապաղեքներու միջէն:

Հովը կը ոգեւորէ անոնց եռանդը, մոնչելով, ճծծելով զանոնք կը մղէ յառաջ եւ միշտ յառաջ գէպի սուրը գործը. կամ կը նետէ անոնց երեսին անալգանք, կտակելով ջախջախ ու փշրել, չննալ անգիւլ եւ չհաշտուել երբէք, ու այնքան տարիներէ ի վեր բազմացուած ազատութիւն ձեռք ձգել, կտակել ապագայ սերնդին կեանք, ազատութիւն:

Յամբոս, անգուլ մարդիկ կը շարունակեն ջուրի սպանանքի տակ

խնդրի բոցերու այս ուժը. եւ բոցերը գիրծր յառաջ յուսահատ կը նետուին յառաջ, կը մեռնին, կը ճնին, կը բողբոջեն ու այսպէս սկըստած գործը կը պնդեն տանիլ յառաջ աննկուն, անտրտուն առանց յուսահատելու:

Իայց բռնակալ մարդիկ՝ աւելի բարկացած, փոքրիկացած իրենց անուշտութեան մէջ, այս լափիլիզող ու ճարակող ոյժին դէմ, կը մազցին ժայռ-սիրտ ունեցող, քայքայուած, ինքն իր վրայ գալարող շէնքին վրայ. իրենց կաշին գէթ ազատելու յոյսով, այն երիտասարդ բոցերու վրթառութիւնէն ու ձեռքէն, կսկսին քանդել, անդամահատել զայն: Բոցերը կսկսին օգնութեան կանչել իրենց գաղափարակից բաժին: Ջուրը կը տեղայ, քային կը փնչէ եւ բոցերը վերջին ճիգը թափելով, ուժասպառ կը սկսին ինքն իրենց մէջ զլորտելիլ: Երիտասարդ ընկերներ աւելի մեծ ոյժ կը ցուցնեն. կը սկսին գալարուն ու կրակոտ, զժնդակ ըստեղութիւնէ ազատելու աննշով վաստած, պայքարը սաստկացնել յայտնի ու զաղտնի եւ կը սողոկեն բըռ-

նակալ շէնքին ամէն խաւերուն մէջ, այսպէս ալ կը շարունակեն սկսուած կռիւր...

Յաղթած ու յաղթուած են:

Բռնակալը քայքայուած է. Բոցերը կը ցած են ոչնչացնել անոր մէկ մասը գէթ, ձգելով հոն իրենց միացող սիրտը եւ անհունները նահատակներուն, կտակելով իրենց սերնդեան ազատութիւն, ազատութիւն:

Բռնակալը չունի հիմայ ոչ առաջուան ոյժը եւ ոչ տեսքը, այն մարդիկ որ կուզէին զանի ազատել բոցերուն ձեռքէն, կանգուն պահելու համար, ինկած են վրան ու իրենց մէջ փայլ-բաժին կընեն:

Իսկ անգին, անհուններու վրայ բարձրացած, բոցերու ծնունդ եղող գեղատեսիլ, նորակառոյց շինուածքը, ազատութեան բոցը, կը ծիծաղի անոր վերայ եւ չուզեր իսկ ձեռք կարկառել՝ յիշելով անցեալ ու թափուած արիւն:

Այսպէս կը կործանին բռնակալներ, կը հրճուի ազատութեան գաղափարն իր բռնամիտ իրտ ոյժը խորտակելուն համար:

Յարգանք կուրող բոցերուն եւ բոց նահատակներուն:

Անուշաւան

աչքերով ու գողգող ձեռքերով
ինչպեստ իրենց դժբաղդ դասա-
կարգին պատրաստուած սիկարի
թուղթը:

Եթէ իւրաքանչիւր Հայ—խա-
նութեան միջին հաշուով տա-
րեկան 20-30 տուփ սպառէր (որն
որ շատ աննշան թիւ մ'է) համեա
գումար մը աւելի պիտի իյնար
այդ ծնողազուրկ որբիկներու
ազքատ գանձանակը, որով կա-
րելի պիտի լինէր քանի մը
տասնեակ որբ աւելի սնուցանել
ու դաստիարակել:

Հայ—խանութեաններու գլխա-
ւոր առարկութիւնը պիտի լինի
նոյն սիկարի թղթին գնոյն բարձ-
րութիւնը: սակայն աչքի առջեւ
ունենանք մեր արդի սպառած
թուղթերը, որոնց առաջը 10, 11
12 շրջ. էն կաւնուին և որոնց
չափը կերթայ պարարտացնել օ-
տար շահագէտներու—առանց ա-
տոնց ալ պարարտ—քսակները:
Մինչդեռ Ազգ. Հիւ. ի թուղթը
մինչեւ 14 1/2 ի ալ ազգարար-
ութեան թերթերու մէջ ու նորէն
մնաց «2այն Բարբառոյ» Այո՛,
թէ և հիւ. ի թղթոյն գինը 14 1/2
է սակայն թղթի աշխույթիւնը
կարելի կընէ հատը 10 փարայ
ծախել և այն ալ անուշ ծախել,
իսկ օտարներուը ընդհանրապէս
3ը 20 փարայը կը ծախուի և ո-
րուն արտագրած շահը աւելի
նուազ կը լինի քան հիւանդանո-
ցինը. օրինակ «գուրա» ըստածը
տուփը 10ի հաշուելով և 3ը 20
փարա ծախելով 5 շրջ. շահ կու-
նենանք հիւանդանոցինը տուփը
16 կէս և հատը 10 փարա ծա-
խելով 6 շրջ. մանաւանդ որ վեր-
ջինին վաճառու մը մեր պար-
տականութեանց ամենէն վսեմը
կատարած պիտի լինինք:

Ահա խնդիր մը որ իր տեսա-
կին մէջ, մեր զգացումներու ան-
կեղծութեան փորձանք մը ըլլալ
կոչուած է, շատ անգամներ մե-
զադրած ենք Եւրոպացի ճամ-
բորդները երբ զմեզ Արեւելքի
Հրէաներ յորջորջած են, արդ-
եօք մենք իրաւունք տուած չե՞նք
ըլլալ, անոնց այդ յոռի կար-
ծիքը գոյացնելու վասնզի մեր
դարաւոր դահճին ձեռքով պատ-
րաստուած բիւրաւոր խողխող-
ուածներու, տկար որբիկներուն
սիրտ կտրատող հծծիւնի աղէ-
խարշ հեծեծանքի ձայնը մինչեւ
երկինք բարձրացաւ: Քարեր ու
սարեր արձագանք տուին, միայն
դու Հայ. եղբա՛յրս քու շահդ ա-
ւելի վեր դասեցիր, դուն որ ա-
նոր օգնութեան փութալու ամե-
նէն մեծ պարտականութիւնը ու-
նէիր, ահա քեզի գեղեցիկ ա-
ռիթ մը որն որ անց քու շա-
հուդ փաստելու, ամենաքաղցր
պարտականութիւն մը եւս կա-
տարած պիտի լինէիր:

Այլիս—Որդեկիր

ՆՍԻԱՐԱՐՆԵՐՈՒՆ ԴԱՏԵ

— օ —

Փետրուար 6ի 7ի ու 8ի նիս-
տերուն մէջ իբր վկաներ հար-
ցարցուեր են քանի մը նահան-
գապետներ, զառաւայտներ,
երկու սպաներ, մէկ նախկին
դատախազ մը և ուրիշ մարդիկ:

Դատաւորները այդ պաշտօ-
նական մարդոց հարցեր ուղղեր
են հասկնալու համար թէ պ. պ.
Ռատուլաւօֆ և Իվանչօֆ իրենց
ստորգաս պաշտօնեաներուն հրա-
մայած են որ կանոնաւոր մի-
թինդներու արգելք ըլլան. ու-
տիկանութիւնը աշխատի ապօ-
րինի միջոցներով կառավարա-
կան թիկնածուներու ընտրու-
թիւնները յայտնեն:

Բացի մէկ երկու հոգիէ ա-
մենքն ալ յայտարարած են որ
Ռատուլաւօֆ և Իվանչօֆ երբէք
ապօրինի հրահանգներ չեն
տուած, չեն պահանջած բռնի
ընտրութիւններ կատարել, և ու-
տիկանութիւնը միջամտած է այն
պարագային միայն երբ խռովա-
րար խմբեր աշխատած են կար-
գը խանգարել: Վկաներէն մէկ
երկուսի վկայութիւններուն մէջ
հակասութիւններ կան, իրարու
չեն համապատասխաներ. իսկ Ե.
բորգի մը երբ դատաւորներէն
մին կը յայտարարէ թէ իր ներ-
կայ վկայութիւնը չը համապա-
տասխաներ հարցաքննիչ դատա-
ւորին քով տուած վկայութեան,
այնինչ առաջինը նպաստաւոր ե-
ղած է մեղադրողներուն, իսկ
ներկայինը մեղադրեալներուն,
այն ժամանակ վկան, նախկին
նահանգապետ մը, պատասխանե-
ր է, որ հարցաքննիչ դատաւորը
այն ժամանակ իրեն սպառնացեր
է և անանկ վկայութիւն մը ընել
տուեր է, իսկ հիմա որ դատա-
ւորին առջեւ կը գտնուի, պար-
տաւոր է ճիշտը խօսել: Առհա-
սարակ վկայութիւնները նպաս-
տաւոր են մեղադրեալներուն հա-
մար: Եւ եթէ բոլոր մեղադրանք-
ներն ալ այդ տեսակ վկայու-
թիւններու վրայ չիմնուած ըլ-
լան, մեծ հաւանականութիւն կայ
որ մեղադրեալները անպարտ
արձակուին: Հիմա գլխաւորաբար
կը քննուի սահմանադրական օ-
րինաց գէժ եղած զեղծումներու
խնդիրը, որոնց մէջ գլխաւորա-
բար կը մեղադրուի Ռատուլաւօֆ:
Յմբարներու և վակօններու մա-
սին ալ մէկ քանի հարցեր տեղի
ունեցան, որոնց մասին Իվանչօֆ
և Թոնչէֆ գոհացուցիչ պատաս-
խաններ տուած կը կարծուի:
Սակայն այդ խնդիրներուն ման-
րաման հարցաքննութիւնը գեռ
չէ եղած:

Ն.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Ռուս և աւստրիական դես-
պանները արդէն Մակեդոնիայի
բարենորոգումներուն ծրագիրը
յանձնուծ են Բ. Դրան: Բարենո-
րոգումները կը վերաբ'րին Իւս-
կիւրի, Պիթօլիայի և Սելանիքի
վիլայէթներուն:

— Սուլթանը Պուլկարիոյ Իշ-
խանին նաև վարչութեան շնոր-
հակալական հեռագիր մը կրկնած
է մակեդոնական կոմիտէները
Պուլկարիոյ մէջ կազմաւումու-
թուն համար:

— Պուլկարական «Վէչէրնա—
Բօշթա» թերթին թղթակիցը
կը հաղորդէ հետեւեալը:

Թրքական երեք զրահաւորներ
ըրկուած են Եմէնի շուրբը ծո-
վահէնները զսպելու համար:

— Յունաց կառավարութիւնը
իր գեսպանի միջոցաւ դիմած է
Եւրոպական պետութեանց դես-
պաններուն առաջարկելով որ
Մակեդոնիայի համար ոչպահանջ-
ուած բարենորոգումներու հետ
միասին չը մոռցուի նաև Եպիրոս
նահանգը, որուն վիճակը Մակե
դոնիայէն ազէկ չէ: Անգլիական
կառավարութիւնը կաշտկցէ Յու-
ն. անին:

ՊՈՒԼԿԱ ԻՍ.—ՄԱԿԵԴՈՆԻԱ

Չօնչէֆի, Եանքօֆի և Միխա-
յէլովսքիին համար տաս հազա-
րական ֆրանքի երաշխաւորու-
թիւն կը պահանջուի, որպէսզի
մինչեւ դատին տեսնուիլը կրնան
ազատ մնալ:

— Դերմանիոյ Լէպցիք քաղա-
քին մէջ պուլկար ուսանողները
Մակեդոնիայի դատը պաշտպա-
նելու համար Գերմաներէն թերթի
մը պիտի հրատարակեն:

— Բոսթայի վարչութեան Յո-
տը բոլոր կայարանապետներուն
շրջաբերականով մը պատուիրած
է որ մակեդոնական կոմիտէներու
հասցէներուն ուղղուած բոլոր
թղթակցութիւնները չը յանձ-
նուին մինչեւ երկրորդ կարգա-
գրութիւն:

ԱՄԵՐԻԿԱ

Միացեալ Նահանգները ամեն
կերպ կաշխատին պատերազմա-
կան զօրեղ պետութիւն մը դառ-
նալ և միջազգային խնդիրներու
լուծման մէջ ազդեցիկ դեր խա-
ղալ:

Այս օրերս Ռաչընկէթընի մէջ
հիմնադրուեցաւ զինուորական
գպրոցի մը նախագահ Ռուչուլիզ
այդ առթիւ ճառ մը արտասանե-
լով յայտարարած է:

«Պարագաներու բերմամբ Մի-
ացեալ Նահանգները դարձած են
մեծ պետութիւն մի: Յամաքա-
յին և ծովային ուժերը պիտի
զօրացուին խաղաղ ժամանակին,
որպէսզի պատերազմի միջոցին
կարենան իրենց պարտականու-
թիւնը կատարելու»:

Ա Ձ Դ

ՎԱՂՂ. փետրուար 13 հինգ-
շաբթի գիշեր Վանդրաւի սրահին
մէջ ինչպեստ ազգային երկսես վար-
ժարանաց տեղի պիտի ունենայ շքեղ
պարահանդէս մը (դիմակաւոր և ան-
դիմակ):

Հոգաբարձութիւնս քաջապս է որ
դպրոցատէր ազգայինք իրենց պատ-
ուարեն ներկայութեամբ պիտի հա-
ճին պատուել սոյն երեկոյթը՝ որուն
արդիւնքը կը յատկանայ բազմաթիւ
աղքատ և որբ մանկանց կրթութեան
Հոգաբարձութիւն Ազգ. երկսես
վարժարանաց
4 փետրուար 1903
Վանա

(Կնիք)

ԿԸ ՓՆՆՈՒՄ

Հմայակ Կ. Չէնճիճեանց Վանքի
բարձրագոյն Գերմանացի մը Պան-
քայի գէպքին Պուրկալի կեանք ու ան-
կէ Կիպրոս դարձած էր. այժմ ուր ըլ-
լալը յայտնի չէ. ուստի անոր ուր
գտնուիլ գիտցողներ թող փութան
իմացնել խմբագրութեանս:

ՅՐԱՆՍԱՅԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՎՊ.ՍԱՆ-
ՆԵՐԷՆ ԼՈՒԻ ՆՈՒԱՌԻ

ԱՆԻԾԵԱԼ ՊԱՆԴՈՎԸ

Գերազանցապէս հետաքրքրաշարժ
Սոսիալ մասը լրացաւ

Երկրորդ հատը սկսաւ հատարակ-
ուիլ

Ամէն դասակարգի դիւրամտելի
ըլլալու համար գիրքը երկու մասով
երեւան կելլայ (մէկ հատորի մէջ) եւ
ամբողջութիւնը 52-54 թերթերէ պի-
տի բաղկանայ:

Իւրաքանչիւր մասին բաժանորդա-
գինն է՝ Վանայի համար 1, 25. ու-
րիշ քաղաքներու եւ արտասահմանի՝
1, 50. իսկ ամբողջութեանը բաժնե-
գինն է. Վանայի համար 2, 50. և
Վանա է դուրս 3 ֆր. ձեռքէ առ-
նողները պիտի վճարեն առաջուան
պէս՝ 8 երեսնոց պրակին՝ 5 սանգիմ:

Այն քաղաք երբ և կամ գիւղերը
ուր մէկէ աւելի բաժանորդ ունինք,
միայն մէկ հասցէի տուէն շարաթ եր-
կու պրակը մէկ ծրարով պիտի լը-
կուի, իսկ առանձին բաժանորդի
պրակները 6 հատը մէկ ծրարով պի-
տի զրկուի փոսթի ծախքը հրատա-
րակին վրայ է:

Փափաղողները պէտք է գիմեն հե-
տեւեալ հասցէին՝
Imprimerie Orientale, Onnik
Parseghian Varna

Դրամի փոխարէն նամակադրոյժ ալ
կ'ընդունուի:

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна